ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ·

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհ. Հայրապետը Տփխիսում:

Վեհափառ Հայրապետը յունիսի 26-ին մեկնելով Մայր Աթոռից, 27-ին, առաւօտեան 6 ժամին ժամանել է Թիֆլիզ· Նորին Սրբութեանը ընդառաջել էին մինչև Սանահին կայարանը Թեմի Առաջնորդ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը, մի քանի հոգևորական և աշխարհական անձանց հետ։

Թիֆլիզի կայարանի հանդիսական դահլիճում Վեհափառ Հայրապետի ժամանումն շնորհաւորել է փոխարքայի կողմից Նորին պայծառափայլութեան ադիւտանտներից մէկը և Թիֆլիզի ոստիկանապետի պաշտօնակատարը։

Վեհափառ Հայրապետը կայարանից կառքով ուղևորուել է դէպի վանքի աւագ եկեղեցին, որի հրապարակում հոգևորականութիւնը, գլուխ ունենալով Տ. Գրիգոր արքեպիսկոպոս Գառնակերեանցին, եկեղեցական թափօրով ընդունել է Նորին Սրբութեան, որ մտնելով ամպհովանու տակ առաջնորդուել է դէպ ի եկեղեցի, ուր յատկացած աղօթքը կատարելուց յետոյ նոյն եկեղեցական թափօրով բարձրացել է առաջնորդարան։

Յունիսի 28-ին փոխարքայի ամուսին Կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան գալով Մցխեթից՝ այցելել է Վեհափառ Կաթուղիկոսին։

Նորին Սրբութեանը ներկայացել և օրհնութիւն են առել Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Վատացին, զանազան բարձրագիր պաշտօնեաներ,

Թիֆլիզի քաղաքագլուխը, Տաճկաց հիւպատոսը, հայ հասարակութիւնների, եկեղեցիների, դպրոցների, բարեգործական հիմնարկութիւնների ներկայացուցիչները և այլ անձինք։

Յունիսի 29-ին առաւօտեան 11 ժամին Վեհափառ Հայրապետը արտակարգ գնացքով, ուղեկցութեամբ թեմի առաջնորդ՝ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի, Սինոդի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի, դիւանապետ Տ. Բագրատ վարդապետի և գաւազանակիր Տ. Մեսրոպ վարդապետի գնաց Մցխէթ և այնտեղից աւտոմոբիլով ուղևորուեց փոխարքայի ամարանոցը, ուր ժամանեց 12-րդ ժամին։ Փոխարքայ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը և իւր ամուսինը սիրով և մեծ համակրութեամբ ընդունեցին Նորին Սրբութեանը։ Թարգման էր Տ. Մեսրոպ եպիսկոպոսը. տեսակցութիւնից յետոյ, Նոցին պայծառափայլութիւնները—Կոմս և Կոմսուհին Վեհափառ Հայրապետին և Նորին Սրբութեան հետևորդներին հրաւիրեցին նախաճաշի։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելելով Մցխէթի վրաց մայր եկեղեցին և հայոց եկեղեցին, արտակարգ գնացքով, երեկոյեան 6 ժամին, վերադարձել է Թիֆլիզ։

Յուլիսի 1-ին Կովկասի փոխարքայ Կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը իւր ամուսին Ելիզավետա Անդրէեվնայի և ընտանիքի միւս անդամների հետ առաւօտեան 10 ժամին աւտոմոբիլով եկել է Թիֆլիզ և $1\frac{1}{2}$ ժամ հանգըստանալուց յետոյ $11\frac{1}{2}$ ժամին փոխ-այցելութիւն է տուել Վեհափառ Հայրապետին և Նորին Սրբութեան մօտ մնացել է մօտ կէս ժամ։ Խօսակցութեան նիւթն եղել է դըպրոցական խնդիրը։ Վեհ. Հայրապետը. ի նկատի ունենալով Թուրքիայում շարունակուող սովը խնդրել է Փոխարքային որ թոյլ տայ Թիֆլիզի նպաստամատոյց Ցանձնաժողովի գործունէութիւնը մի տարի էլ շարունակել. այլ և խնդ-

րել է, որ Տաթևի Հոգև. կառավարությունը Գորիսից նորից տեղափոխուի Տաթև. Փոխարքան երկու խնդիրներին էլ հաւանություն է տուել։ Ներկայացրել է մի մասնաւոր խնդիր էլ։

Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան փոխարքան վերադառնալով պալատ՝ ընդունել է պաշտօնական անձանց. և երեկոյեան 7 ժամին իւր ընտանիքի հետ արագընթաց գնացքով մեկնել է Պետերբուրգ։ Փոխարքային մինչև կայարան ուղեկցել են բարձրաստիճան զինուորական և քաղաքացիական պաշտօնեաներ, իսկ Վեհափառ Հայրապետի կողմից՝ Թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսը, Սինոդի անդամ Մեսրոպ եպիսկոպոսը, Դիւանապետ Բագրատ և Սինոդի անդամ Մատթէոս վարդապետները։

Վեհափառ Հայրապետը յուլիսի 2-ին այցելել է Ներսիսեան Հոգև. դպրոցի նոր շինությունը, Բամայենց եկեղեցին և կուսանաց անապատը, որ վերանորոգուում է։

Վեհափառ Հայրապետը Թիֆլիզում յունիսի 7-ին այցելել է Գայեանեան դպրոցը և Կ. Հ. Բ. ընկերության շինությունը։ Դպրոցի շինության մէջ զեկուցում և բացատրություն տուել է տեսուչ Ս. Աբովեանը, իսկ Կ. Հ. Բ. ընկերության շինության մէջ՝ ընկերության վարչության նախագահ Ս. Ցարությունեանը։

Նորին Սրբությունը Գայեանեան դպրոցին նուիրել է 500 ռ.

Թիֆլիսի քահանաները ամենայն Հայոց Կաթուղիկոսի մօտ

Ամսիս 12-ին, առաւօտեան ժամը 10-ին, Նորին Վեհափառության ներկայացան Թիֆլիսի քահանաները։

Նորին Սրբութիւնը, խօսք բանալով, ասաց մօտաւորապէս հետևեալ խրատական ճառը՝ նախապէս հրաւիրելով կարգապահութեան և նկատելով այն թերութիւնների մասին, որ հասել են իրան Վեհափառ Կաթուղիկոսին։

Թուելով մի քանի դէպքեր, երբ քահանաները մտնում են իրանց ծխականների տները միայն օրինակատարութիւնների ժամանակ, Վեհափառը շեշտեց, որ պէտք է սերտ կերպով կապ պահպանել ժողովրդի հետ, օգնութեան ձեռք կարկառելով ընտանեկան անախորժութիւնների, դժտութիւնների ժամանակ։ Գործակալներին նկատեց, որ նրանք պիտի կատարեն իրանց պաշտօնը բարեխղճութեամբ և ոչ թէ միայն ձևականօրէն։ Վեհափառ Հայրապետը ի միջի այլոց նկատեց, որ երբ մէկը կրում է քահանայի և այն էլ աւագ քահանայի կոչում և նոյնիսկ թերթի էլ խմբագիր է, չէ կարող թոյլ տալ իրան փաստերի խեղաթիւրում և զրպարտութիւն։

Գնահատելով մամուլի մեծ նշանակութիւնը և քաջ գիտենալով, որ նա կարող է խոշոր ծառայութիւններ մատուցել ժողովրդին, երբ բարեխղճօրէն է կատարում իր պարտականութիւնները, սակայն Նորին Վեհափառութիւնը գտնում է, որ յանցաւոր է մամուլի այն մասը, որ ճշմարտութիւնն իմանալով հանդերձ՝ կեղծիք է կատարում, որ ասել է թէ՝ խեղաթիւրում է ճշմարտութիւնը և այնչափ է առաջ գնում, որ ի լուր ամենեցուն յայտարարում է, թէ Էջմիածինը իրանից ներկայիս մոխրակոյտ է ներկայացնում. և երբ այդ տողերը իր թերթի մէջ գրողը մի աւագ քահանայ է, հարց է ծագում, թէ ինչպէս աւագ եկեղեցու այդ աւագ քահանան թոյլ է տալիս իրան գրել նման անններելի լուրեր։ Այս ախթով Նորին Սրբութիւնը յարեց, որ նման տգեղ երևոյթների համար իր առաջ պատասխանատու կը համարուի սրբազան առաջնորդը, եթէ ըմբոստներին արժանի պատիժը չի տայ։

Ապա նկատեց, որ երբ որևէ քահանայ չէ կատարում իր պարտականութիւնները բարեխիղճ կերպով, նա իրաւունք չունի ուրիշներին նկատողութիւն անելու։ Հնումը

քահանաները, որպէս ժողովրդի հայրեր, իրանց հօտին առաջնորդում էին դէպի լաւը, իսկ այժմ նրանք ընդհակառակը ժողովրդի թերահաւատանալու և եկեղեցու կործանման պատճառ են դառնում։

Եւ գրութիւնը այնտեղն է հասել, քահանան այն առաքինան չեղվել է իր ուղիից, որ այժմ երեցկինը ամուսնալուծութեան խնդիր է յարուցանում։

«Ձեզ եմ հացնում,—յարեց Նորին Սրբութիւնը,—արդեօք սա տանելի՞ գրութիւն է։

«Ոակաւաթիւ արժանաւոր քահանաներին ես գիտեմ ըստ արժանւոյն գնահատել, իսկ անարժանները չեն կարող եկեղեցու ծոցում տեղ գտնել»։

Այս ամենից յետոյ Նորին Վեհափառութիւնը յորդորեց, որ բոլոր հաստատութիւնները և պաշտօնեաները իրանց պաշտօնը կատարեն բարեխղճօրէն, և առանձին կերպով շեշտեց, որ քահանաները խղճի մաքր կատարեն իրանց պարտականութիւնները, որովհետև քահանան առանց ժողովրդի քահանայ չէ։

Վերջը օրհնեց բոլորին, յոյս յայտնելով որ ուրիշ անգամ իր ականջին չեն հասնի անպատշաճ լուրեր, որից յետոյ բոլորը համբուրեցին Նորին Վեհափառութեան աջը և գուրս եկան։

Թիֆլիզում Վեհափառ Հայրապետի հոգացողութեան գլխաւոր առարկաներն են եղել դպրոցական գործը, Մայր Տաճարի վերաշինութիւնը, Ճեմարանի Տեսուչ գտնելը։

Յուլիսի 15-ին ցերեկուայ 4½ ժամին Վեհափառ Հայրապետը մեկնել է Տփխիսից Մայր Աթոռս դալու։

Նախքան մեկնումն ժամը 2-ից սկսած մարդիկ խումբ խումբ եկել են Վեհափառին ողջերթ մաղթելու և աջը համբուրելով օրհնութիւնը առնելու։ Ժամը 3-ին հնչել են

Թիֆլիզի հայոց բոլոր եկեղեցիների զանգակները և քահանայական դասը փիլոններով Նորին Սրբութեանը առաջնորդել է եկեղեցի, ուր Նորին Սրբութիւնը աղօթելուց ժողովրդեան պահպանիչ առելուց յետոյ կառք նստելով իւր հետևորդների և բաւական թուով ուղեկցողների հետ գնացել է երկաթուղու կայարան։ Կայարանի հանդիսականի դահլիճում քիչ հանգստանալուց յետոյ Վեհափառ Հայրապետը մտել է իւր համար պատրաստած վագոնը— սալոնը. ուր հրաժեշտի ողջոյն և օրհնութիւնը տալով ազգային, հասարակական, եկեղեցական գործիչներին, մամուլի ներկայացուցիչներին և այլ ուղեկցողներին, մեկնել է Թիֆլիզից։ Վեհափառ Հայրապետին մինչև Սանահին ուղեկցել են Թիֆլիզի թեմի առաջնորդ Տ. Դարեգին արքեպիսկոպոսը և հոգևորականներից մի քանիսը։

Վեհ. Հայրապետի վերադարձը Մայր Աթոռս

Յուլիսի 16-ին առաւօտեան 10 ժամին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մայր Աթոռս։ Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի կարգադրութեամբ Վեհափառ Հայրապետին դիմաւորեցին Մայր Աթոռոյս միաբաններից Տ. Տ. Յովհաննէս արքեպիսկոպոսը, Աշտ. եպիսկոպոսը, Սինոդի անդամ Բարգէն, Վանական Կառավարութեան նախագահ Ներսէս, և Անտոն ու Խաչիկ վարդապետները. վերջիններս որպէս հայրապետական դրօշանշի խաչ դաւազան կրողներ։

Միաբանութիւնը գլուխ ունենալով Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին եկեղեցական թափորով ընդունեց Վեհափառ Հայրապետին վանքի արտաքին դարուազայի առաջ. Վեհափառ Հայրապետը շուքաւոր առնելով մտաւ ամպհովանու տակ, որի սիւները բռնել էին Սինոդի ատենադպրները. թափորը «Հրաշափառ» շարականով առաջ շարժուեց դէպի Մայր Տաճարը, որի ուղղ դրան առաջ երգուել սկսուեց «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը։ Վեհափառ Հայրապետը մտնելով տաճար Ս. Իշման տեղի առաջ կատարեց որոշեալ աղօթքի կարգը, և «պահ-

պանիչ» աղօթքով օրհնեց միաբանութիւնն ու խռնուած ժողովուրդը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը միաբանութեան յառաջընթացութեամբ բարձրացաւ Վեհարան։

Տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբութեան բացակայութեան ժամանակ, Մայր Աթոռի դրութեան մասին հետեւեալ յայտարարութիւնը

«Նորին Վեհափառութեան...

Ըստ սրբատառ կոնդակի, թ. 1601 ի 24 յունիսի տարւոյս, տուեցելոյ ի Սրբութենէ Ձերմէ յանուն իմ իբրև Տաղապահ Վեհափառութեան Ձերոյ ի բացակայութեան Ձերում ի Մայր Աթոռոյս ի 26–դէ յունիսի ց 16 ամսոյս արձակեցի զօրագիրս Սինոդի որպէս նախագահող Ատենին, հսկեցի ի վերայ գործունէութեանց ամենայն պաշտօնէից հաստատութեանց, ի վերայ տնտեսական կառավարութեան Մեծի տանս և ի վերայ կարգապահութեան ի Տաճարի։ Պատշաճ և վայելուչ ընդունելութիւն մերազմեայ և օտարազգի հիւրոց և ուխտաւորաց եղև գլխաւոր հոգ իմ։

Արդ ողջանելով և շնորհաւորելով զբաղձալի վերադարձ Սրբութեան Ձերոյ ի գահ իւր և մատուցանելով զբանալիս ներքին գանձարանի Մայր Աթոռոյս, զյանձնեալս ինձ, շնորհ ունեմ գոհութեամբ և բերկրանօք վկայել զբարւոք ընթացից, զպարտաճանաչ կարգապահութենէ և զանթերի կատարմանէ պարտուց միաբան եղբարց և պաշտօնէից, որք աղօթիւք Ձերովք ողջ և առողջ ըստ հոգւոյ և մարմնոյ եռանդեամբ և ամբասիր կենցաղավարութեամբ յարատեւեցին ի կատարման պաշտօնից և պարտականութեանց իւրեանց։ Խնդրելով ի վերայ միաբանական ուխտիս զօրհնութիւն և զխնամս Վեհափառութիւն—Ձերոյ՝ մնամ...

Յուլիս 1-ին այցելեցին Մայր Աթոռս Պետերբուրգից ուսուցչապետ Վարդան Վարդանեան և դնդապետ Պօղոս-Սուլթանշահ, որոնք Երևանով անցան Սևանի վանքը և

այն տեղից Դիլիջանի և Ղարաքիլիսի վերայով պէտք է վերադառնային իրանց բնակավայրը։

Յուլիսի 5-ին Վեհ. Հայրապետի յանձնարարականով Տիֆլիսից եկաւ Մայր-Աթոռս անգլիական եպիսկոպոս Վիլիամ Վիգրամ, ներկայացաւ Ամենապատիւ Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին, հիւրասիրուելով և գիշերելով Մայր Աթոռումս՝ հետեւեալ օրը Իգդիրի վերայով ուղևորեց Վան, այնտեղ պաշտօնավարելու և հովուելու ասորիներից կազմած սակաւաթիւ հօտը։ Եպիսկոպոսը ասիական լեզուներից խօսում է թուրքերէն։ Նա 1907 թուին ևս եղել է Մայր-Աթոռումս որպէս Ջիբրալթարի եպիսկոպոսի հետևորդ։

Մոսկվայում կայ մի յանձնաժողով, որ Ռուսաստանում դպրոցական ճանապարհորդութիւններ է կազմակերպում ճանապարհորդողներին Կայսերութեան եկեղեցիների հետ ծանօթացնելու համար։

Այդ յանձնաժողովի յանձնարարութեամբ Ռուսաստանի ներքին նահանգներից մի խումբ ուսուցչուհիներ դէպ ի Կովկաս ճանապարհորդելով՝ յուլիսի 8-ին հասան Մայր Աթոռս, գիշերեցին վանքի հիւրատանը, հիւրասիրուեցին և տեսնելով կարևոր հնութիւններն ու հաստատութիւնները գոհ սրտով հեռացան Անի գնալու և այնտեղից իրանց վերադարձի ճանապարհը շարունակելու համար։

Յուլիսի 15—17 Մայր Աթոռումս հիւր էին մի խումբ այր և կին Գերմանացի ճանապարհորդներ թուով 24 հոգի, որոնց նպատակն է ծանօթանալ մօտաւոր արեւելքի հետ։ Այս տարի առհասարակ ճանապարհորդների խմբերը բազմաթիւ են։